

1-0.
891.99

ՍՄԲԱՏ ԻԿՁԲԱՇ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ



ԵՐԳԱՐԱՆ

(Բանաստեղծութիւններ)



НАРОДНЫЙ ПѢСЕННИКЪ

(Стихотворенія)

Сочиненія Смбата Юзбаша.

Электротпечатня газ. „Баку“.
Баку, 1911 г.

891.99

Зм-67

3008/10 4րտ Կարմիր Քար
- 6 NOV 2011
891.99
300-67
ՍՄԲԱՏ ԻԿՁԲԱՇ
1911

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ



ԵՐԳԱՐԱՆ

(Բանաստեղծութիւններ)



НАРОДНЫЙ ПЪСЕННИКЪ

(Стихотворенія)

Сочиненія Смбаѳа Юзбаѳа.

Электрoпечатня газ. „Баку“.

Баку, 1911 г.

09.07.2013

45425

MS VON 0-

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ



ԼԱԼԿԱՆ ՄԵՂԵԴԻՆ:

(ժողովրդական երգերից ապրանքային նշաններ):

Նւէր հայ գեղջկուհուն

I

Թէ երբ ներծծեց լալկան մեղեդին իմ
երակներում, և որսիս թափով,—այդ ես
ստոյգ չը գիտեմ, —չեմ յիշում... միայն
ներսից՝ սրտիս խորքերից բարձրացող մի
աղօս յուշերդ իր մթին թոթովանքներով
կը թւայ ինձ յաճախ, թէ այս է պատմում—
— Դու դեռ սաղմային զրութեան մէջ
«էիր՝ աշխարհին անտես», —երբ դաւաբագեղ



3146:84

«գարուն էր բացւել և սարը զարդարւել էր
«բենեղ շորերով... ու ափսոսեղ՝ այն սարի
«կատարին երգեց գեղաչեայ հայ գեղջկու-
«հին հրացայտ նայւածքով լալկան մեղեդին...
«Նրա բոսոր այտերը կրակ կարան սերնդի
«ապրած տառապանքի ողբերգը երգելիս, և
«սարի բենեղ հագուստները ցած թողեցին
«իրանց երկներանդ կատարները, որ յաւի-
«տենականութիւնից ծայր առած թախծան-
քը ապրեն»...

«Իհնչ էր երգում գեղաչեայ հայ գեղջ-
«կուհին, — խորտակւած սէր. . վաշխառւի
«ձեռքով կատարւած սրտամորմոք մի պատ-
«մութիւն... թէ կեանքի մի այլ անարդա-
«րութիւն... — այդ քեզ պէտք չը կայ իմա-
«նալու, այդ անքան էլ կարևոր չէ, — քան-
«զի նա մի կաթիլ էլ չէ լալկան մեղեդու
«այն անհուն մորմոքի գիմաց, ուր դարե-
«քի անսահման ցուն է հեծեծում»...

* * *

II

Հիմա, երբ դալարագեղ գարունն է
բացւում և սարի ճակատին շքեղ ու փար-
թամ պսակը բոլորում...

Երբ թարմ կորովով լիքը անց եմ կե-
նում սարի կողքով, — իջնում է ափսոսեղից
լալկան մեղեդու վաղիմի վշտոտ մորմոքը
ու թոթովում ականջիս՝ —

— Դու յիշում ես... դու դեռ աշխարհ
«չէիր եկել, դու դեռ սաղմային պարզու-
«թեան մէջ էիր, երբ սարի բենեղ կատա-
«րից մենք դէպի քեզ ցածրացանք և ան-
«լուր անցածների կսկիծից ու մորմոքից
«հիւսւած թախծանքը ու կարօտը քեզ բե-
«րինք... և դու մինչդեռ ապշած կը նայե-
«իր, կուներնդրէիր մեզ, — մենք մօտե-
«ցանք գեփիւռի թևերով, ծածկեցինք քո
«սանդրամանկութեան վճիռ դէմքը, ներս
«ծծեցինք ու սնուցինք քեզ... Մենք պէտք է
«հնչենք, յաւիտեանս հնչենք, և քեզ երբէք
«էլ պէտք չը կայ իմանալու՝ թէ ինչ ենք

«մենք, որն է մեր մայրը, որտեղից ենք
«զալիս և ուր գնում... զու միայն ապրիր,
«ապրիր այն տմենը, ինչ մենք ենք ապ-
«րում... — Այդ էինք ասում քեզ այն ժա-
«մանակ, — այդ ենք ասում և հիմա»...



Պ Ա Տ Ճ Ա Ռ Ը Ռ Բ Ն Է Ր...

Ցաւը որտեղ էկաւ —

Պատճառը որն էր... —

— Սիրածէդ բաժնին, բուրիկ ջան,

Դարդերդ խորն էր...

Մթնով ճանդեցին, բուրիկ ջան, —

— Դարդդ էր կապուտ...

Հէր ու մէր, ազգական

Անսիրտ են, անզնութ...

«Ախ» - ով օրդ սկսու,

Սիրտդ դառաւ քար...

Ցաւի մէջ մեռար անգիւման —¹⁾

— Հարցընող չը կար...



¹⁾Գրեցիւմ գործածած ինչպէս, Անգիւման, նոյնպէս
էլ միւս **osur** եւ **սեղական-գաւառական** բառերի բա-
ցաւորութիւնը տե 32-դ երեսում՝ բաւարանում:

ԷՍ ԻՆՉ ԴԻԻԱՆ-ԴԱՏԱՍՏԱՆ Ա՛)

Բաղչի բոլոր կանանչ ուր ա,
Բաղչի մէջը պաղ աղբուր ա.
Յակօն գինայ բոլորն ուրն ա²⁾ —
— Տէս, ի՜նչ դիւան-դատաստան ա. —

— Գէւօն սաից³⁾ թուղթ կը հանայ,
Վկաներով դատ կը բանայ.
Յակօյ բաղչին կը տիրանայ —
Էս ի՜նչ դիւան-դատաստան ա:

1) Այսեղ „Դիւան-դատաստան“ բառերը ժողովուրդը զործածում է „Անարդարութիւն“, „Անիղնութիւն“ բառերի փոխարէն:

2) Իրենն է:

3) Սա՛ս, կեղծ:

Բաղչի աղբուր շատ սարին ա,
Ջէյրան թեւլին ջուր կը տանայ,
Յակօն գինայ թեւլին ուրն ա —
— Տէս, ի՜նչ դիւան-դատաստան ա. —

— Գէւօն բըռնով փող շաղ կուտայ,
Հօրն ու մօրը կաշառք կուտայ,
Թեւլուն զօռով կին քաշ կուտայ, —
— Էս ի՜նչ զուլտմ դատաստան ա...

Գէւօն թեւլուն տուտաղ արեց,
Դուռը դրեց, յերաիք քարեց.
Ժէս քարերով ճանպէք շարեց,
Էս ի՜նչ անսիրտ դատաստան ա...

1911. 27 VI. Բաղու.



Ք Ո Յ Ր Ը

Սիրելի Աւարաւսի՛ն

Արտերըդ վար ես անու՛մ,
Եղներըդ սար ես աւանու՛մ, —
— Արտ-ափիդ մեռնի՛մ, ախպէ՛ր,
Քուրը մտքէդ չե՛ս հանու՛մ. . .

Սարիդ մեռնի՛մ,
Վարիդ մեռնի՛մ,
Սարէն հուգա՛ս —
Յաւըդ առնի՛մ:

Զօրը արեկց տապա՛ծ,
Ծովի չափ քրտինք թափա՛ծ —
— Վար-ցանքիդ մեռնի՛մ, ախպէ՛ր,
Հող ու ջրիդ ես կտալա՛ծ:

Հողիդ մեռնի՛մ,
Բոյիդ մեռնի՛մ,
Դադրած հուգա՛ս
Քուն հը դնի՛մ:

Թախոզ — տանոզ քեզ անթիւ,
Դարդերիդ չը կայ հաշիւ.
Քուր մեռնի չարքաշ ջանիդ,
Պահում ես նամուս, սլատիւ.

Դարդիդ մեռնի՛մ,
Պատուիդ մեռնի՛մ,
Յաւ ու դարդըդ
Տնւր ես տանի՛մ:




ԱՆՃԱՐ ԱՅՐԻՆ

Ձեր հէր մեռաւ ցաւերի մէջ,
Մն քարերով շէմս շարւեց.
Մացինք վիզ ծուռ, անտէր ու խեղճ —
— Ի՞մալ ապրինք, եթո՞ւմ բալէք...

Ի՞մալ կախւինք խելի յերսէն, —
— Ո՛չ կը գթան, ո՛չ կը լսեն,
Տաք կը խօսեն, պաղ կը խօսեն, —
— Ո՞ր քարն ընկնինք, եթո՞ւմ բալէք...

Ո՛չ աւերը¹⁾ էս փուլ կը գայ,
Ո՛չ հոգէսու կը գայ վերից —
— Ի՞մալ պրծնինք, անտէր բալէք,
էս զուլումի, ցաւի ձեռից...

Բագու, 1911 թ. 13 VII.



¹⁾ Երկինք.

ՍԱԻԴԷԴ ՎԱՌԵՅ...

Կորած երկրից¹⁾ չը կայ համալ,
Սօսքը լսեմ, անհեմ փափաղ,
Լեզուս կտրած²⁾, սիրտս պապակ,
Սաւղէդ մաշեց, սաղմստ ետր ջան...

Եփ բոլորի իրեք տարիդ,
Ու յետ դառնաս հանդ ու սարիդ, —
— Զուր ման մի գայ Հայկօ ետրիդ,
Սաւղէդ կերսու, սաղմստ ետր ջան...

Հօր ու մօր սիրտ դառած ժէռ քար,
Հայկօդ կորցրին գարբէդիար.
Մէ զուշ էղար, — ձեռնէս թօար,
Սաւղէդ վտոնց, սաղմստ ետր ջան...

1911. 6 VIII. Բագու

¹⁾ Անգլիսի նեաւորութիւն, որ անմասշէլի է գեղջկանոս հասկացողութեանը:

²⁾ Այսինքն՝ հասարակական կարգերն հնարաւորութիւն չեն տալիս իր ցար արտայայտելու—համբի, լեզուն կտրածի նման է:

* * *

Սառ վարդի նման
Հագած կարմիր — կառ,
Եղնիկի նման
Հանդեր ման կու գաս,
Կաքաւի նման
Շօրօրներ կուտաս,
Քայլէ, ետք ասեմ,
Ձէյրան եարօ ջան:

Քու սիրու ձեռքից
Դարձած վիրաւոր,
Թառ բոյիդ յեռքից
Ընկած սար ու ձոր...
Կարօտ սեռաւի
Աչերիդ աղւոր,
Կայնէ, ետք ասեմ,
Ձէյրան եարօ ջան:

Ալ վարդի վրայ
Բուսնում է սուր փուշ,
Տւած տանջանքը
Դառն է ու անուշ...
Հազարից մէկը
Վարդին չեղնի թուշ —
— Չար բաղդն է էսպէս,
Շողիկ եարօ ջան:

1908 օգոս. սկիզբ.

Մասնաւ գիւղ:



Դ Է Ա Ր Ի Խ Օ Ս Ա Ն Ք¹⁾

Հեռացած եար ջան,
Մոռացած եար ջան,
Դէ արի խօսանք...

Վարդող գարնան պէս
Անուշ բուրեցիր,
Մէ կրակ դարձար
Սիրտս էրեցիր.
Թէ չէիր առնում
Ընչի՞ խաբեցիր,
Ուխտագանց եար ջան,
Դէ արի խօսանք...

1) „Դէ արի խօսանք“ միտքս այսեղ ժողովուրդը գործածում է „Արի հաշիւ տեսնեմ“ իմաստով. այս ոտանութի մէջ, ինչպէս „Դէ արի խօսանք“-ը, նոյնպէս և մի էտնի ուրիշ ժողովրդական երգերի կտորներ ևս պահպանել եմ առանց փոփոխութեան՝ ցանկանալով՝ խաբած նայ գեղջկունու մտմտքի անաղաւս պահել այդ տղերում:

Օրերս երկան
Տարիներ դառան,
Ջեռներս ծոցիս,
Աչքս ձեր դռան...
Ինչպէս դու եարիդ
Արիւ մտահան,
Քարասի՛րտ եար ջան,
Դէ արի խօսանք...

1908 ապրիլ

Էջմիածին:



3146 - 84

Ա. Հ. Ա., ե. Կ. Ա. Ի...

— Մ—իմ.

Լուսնեակը ելաւ. շողերը դողդոջ
Ընկան չորս բոլոր...

Զօրը ամբողջ
Ճանապէղ եմ պահել
Շւար ու մոլոր...

Տես... անա կը դայ...

Անա, եկաւ...

— Ախ... ուր է, չեկաւ...

Առաւելը թովիչ բլւրեղ արցունքով
Իր երգն է մեջում —

— Գիշերային

Իր խորհուրդը խոր, —

— Առաւելի նման

Մոլորած շրջում,

Քեզ եմ անըջում

Տարիներ բոլոր...

Անա, նա կը դայ...

Անա, եկաւ...

Ախ... ինչո՞ւ, չեկաւ...

Աստղերը գիւթիչ կանթեղներ վառին
Երկնի երեսին...

— Փայռեր... թփեր

Մէկ-մէկ շունչ առին,

Ինձ հետ կարտասւին...

— Կանթեղներ հանգան անբոյր, անցնորք
— Ինձ նման տարտամ...

Էլ չ'կայ ցնորք —
Երազս հանգաւ —
Երազս փարթամ...

Ախ... չեկաւ... չեկաւ...
Հեզնեց... չեկաւ...
Նարեց... չեկաւ...

1910. 9 IX.

Մասնաւոր գիւղ:



Ո Ր Բ

Հօրըդ կորցրին զիարդիւար,
Մօրըդ տարան հեռու աշխարհ,
Քուրըդ դարձրին քեզէն օտար —
— Վայ, աշխարհի անտէր տղայ...

Օրերդ անցան խալիկն գերի,
Առանց դարնան վարդ ու բոյրի,
Առանց սրտով սիրած բոյրի —
— Վայ, աշխարհի անտէր տղայ...

Ցաւ ու դարդից չառար դադար,
Կեանքըդ անցաւ զուրկ ու թափառ,
Լէն աշխարհում անտուն օտար —
— Վայ, աշխարհի օտար տղայ:



Մ. Տ. Գր.—ին.

Մ Ո Ռ Ա Յ Ա Ծ Հ Է Ք Ե Ա Թ

Անուշաբուր գարննադարին
Ախ, քու խաթեր, քու սիրուն
Սարեր, ձորեր ինձ հեռ լացին —
— Կարօտ քու ծով աչերուն:

Անտուն, անտէր դարդս առած
Դաշտ ու հանդեր դուրս բնկայ,
Թելիկ-մեկիկ շիմշադ բոյիդ,
Ծով աչերիդ ման էկայ:

Որին հարցրի — ժէռ քնր կտրան —
— Չասին ուր ես, շէկլիկ ջան,
Ընկերներիս աղաչեցի —
Բալքի ճանաչեդ ինձ ցոյց տան:

Ընկերներս ինձ դաւեցին —
Տարան—քցին ժէռ քարփէն,
— Նարայ տւին ու խնդացին —
Ախ, կորցուցին քու ճանաչէն...

1905 թ. փետր. սկիզբ.

Բագու:



Գ Ա Ր Ն Ա Ն Յ Ո Ւ Շ Ե Ր

Ալադեազի ծով լանջերին
Ծառով, ծաղիկով զարդարուն
Գառն ու ուլս զերկը առած
Եկաւ բազմեց վառ զարուն:

Խամ գառ-ուլս զըփի նման
Տրճիկ կուտան, կը փախչեն,
«Ձրզի մեռնիմ, ազիզներ ջան,
«Ախր էդ ուր, — կը կանչեմ:

Թունջիկ-մունջիկ անուշ Բըշօս
Հէնց որ ձէնս կը լսէ, —
— Յետ կը դառնայ, վզով կընկնեմ,
Նա երեսըս կը լիզէ.

«Տօ Բըշօ ջան, հողմդ մատաղ,
«Մազեամ գինաս դու ինքդ էլ, —
«Որ էս բոլոր գառն-ուլի մէջ
«Քըզի գուզիմ ես յաւել:

Անուշ Բըշօս, գառ ուլս առած
Ուրախ-ուրախ կեցնեմ սար,
Դարդ ու ցաւս ինչպէս երազ
Մոռացել եմ ես իսպառ...

Կը քչքչայ սարի առուն,
Կը ծփծրփան ծաղիկ, սէզ,
Կը փէրփրան դաշտն ու հեռուն
Մանուկ օրւայ երզի պէս...



Ս Ա Ի Դ Ա Յ

I

ԷՍ ՃԱՆՊԻՆ ..

Էս ճանապէն օլօր կերթայ,
Սարերի բոլոր կերթայ.
Սարեր ամեն մութ հագան, —
— Էս մութ ճանապէն ճւր կերթայ...

Սաւղէն եաման ա,
Հանգը դուման ա,
Դարդերը ծածկիր —
Խալը չիմանայ...

Սաւղէն կը տանի,
Խելքից կը հանի,
Դարբեդար կանի...



II

ԷՍ ԻՆՉ ՍՈՒԳ Է...

Էս ի՞նչ սուգ է, էս ի՞նչ լաց. —
— Ճակատիւ էս էր գրւած...
Ո՞վ է դրել էս դայդէն —
— Էս անիրաւ, էս սաւղէն...

Կը կանչէ,
Կը տանջէ,
Կը թողնէ վար ընկած,
Կը ծաղրէ, կը փախչէ...



ՀԱՏԻԱԾՆԵՐ

I

Բաղչիդ մէջին անց-դարձ կանես,
Սուս կը քէլես, իմաց կանես.
Ինձ կը տեսնես, սուտ լաց կանես, —
— Բոլորը զո՛ւր, — չեմ հաւատայ...

Դու ման կը գաս մարալի պէս,
Ինձ էրեցիր Քեարամի պէս,
Տունըս քանդիր հարամու պէս —
— Տնաքանդիս չեմ հաւատայ...



II

Քու խոս բաղչէդ կանաչեր ա,
Օտար երկրից քեզ կանչեր ա,
Նստիր ցաւս ականջ էրա,
Էկածըդ ճանպէքին մատաղ...

Առակի պէս անուշ հոսիր,
Բլբուլի պէս տաղեր ասիր,
Հին դարդերից հետս խօսիր,
Մեղրածօր խօսքերիդ մատաղ...



„ԿԱՐՄԻՐ ԵՐԱԶՆԵՐ“-ԻՅ

I

Էսպէս զուլում վարդ կեղնի,
Էսչափ ծանր դարդ կեղնի.
Ո՛ւր չքանամ քար երկրից —
Էսպէս քարսիրտ մարդ կեղնի...

Զորն ու առուն առաջւան,
Միջի ջուրը կարկաճան...
— Ո՛րտեղ կորչեմ էս երկրից —
Հողն ու ջուրը դաւաճան...

Ծով, լէն սիրտը սէր չունի,
Երկիր չունի, մէր չունի.
Լէն աշխարհում, ծով երկրում.
Մէկ հանգստի տեղ չունի...



II

Ե Ր Գ Է Ք Ո Յ Ր Ի Կ...

Երգէ քոյրիկ,
Երգը քոն է, քո դարն է,
Սաւղէն իմն է, — սաւղէն ու տնոյ է, դանն է...

Երգէ քոյրիկ,
Զէնիդ հաւքերը կը գան, —
Իմ ցաւերը, իմ վշտերը կը սգան...

Իմ ցաւերը, իմ վշտերը թող խօսեն,
Ողջ աշխարհով աւանջ դնեն ու լսեն...

Երգէ քոյրիկ,
Երգը քոն է, քո դարն է,
Սաւղէն իմն է, — սաւղէն ու տնոյ է, դանն է...

1910. X 6. Ագ—պոլ:



Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ալ — կարմիր:

Անդիւման — անյոյս:

Բալքի — քերեւ:

Դարբեգար { 3 բառն էլ, համարեա՝ միեւ-
Դարբեգիար { նոյն իմաստով գործածուած են,
Դիար-գիար { այն է՝ մարդկային անդարձ,
անհետ կորուստ:

Դուման — մեզ, մատախուղ:

Եաման — անբուժելի վերք:

Եփ — երբ:

Զուլում — մեծ, անպատեհի դժբաղտութիւն:

Թուշ — անխաւարտական հանդիպում:

Իմալ — ինչպէս:

Խամ — չընկերացած, չը վարժուած:

Հարամի — աւագակ, բշտակ:

Խըլլ կամ դալլ — օտար մարդ:

Ղայդայ — սովորութիւն, սրտիկցիա:

Ղուշ — բազէ:

Մագեամ — ուրեմն:

Մարին — սառն, զով:

Սաւդայ — զօրեղ սեռ, սիրահարութիւն, ինչ-
պէս դէպքի կիկնը, նոյնպէս էլ դէպքի
ամեն տեսակ գրադրումի կամ առարկայ:

Տուտաղ արեց — բանդարիկեց, բանդարիկեալի
պէս պահեց:

Տրճիկ կուտան — կը վազվրճեն, կը բոցկոսեն:

Նմանօր. գրքոյկն այստեղ՝ Բագումա՝ ծախ-
ւելու է մինչև տեղականքեր ամսի 20-ը. ուստի
ցանկացողները, եթէ իրանց շրջանում չեն կա-
րող ձեռք բերել, թող դիմեն այս հասցէով՝
Բալախանի, 9-я гоупна Бр Мирзоевых, սպա-
ռողական խանութի կառավարիչ պ. Սեյրանին:

«Ազգային գրադարան»



NL0353022

CO
MAI
43

303/12

45425

ՀԱՅՍՏԵՆ ՏԵՆԵԼ

ՍՄԲԱՏ ԻԻԶԲԱՂԻ հետեւեալ աշխատութիւնները

1. Սիրոյ ու տանջանքի յուշերից (ոտանաւորների Ա պրակ) — 1909 թ. սպառաւած
2. Մօրաբարոջս զրոյցը (յոյժ սակաւաթիւ) 1911 թ. Գինը 3 Կ
3. Ժողովրդական երգարան՝

Գինն է 10 ԿՈՊ. (տոսանց կազմի)

ՀԱՅՍ ՊԵՏՔ Է ՏԵՍՆԵՆ

1. Ոտնատակ տւած արդարութիւնը \ պատմաւածք-
2. Ղազար ամու պատմաւածը | ներ
3. Տարեգիրը (վէպիկ)
4. Սկիզբն (զրոյց)
5. Պայքար. — պիէս գիւղական մթնոլորդից
6. Մի շարք մանր պատմաւածքներ
7. Տրտունջներ և մրմունջներ | Արձակ բանաս-
8. Կարմիր երազներ | տեղծութիւններ
9. Աշուղը (վիպական պօէմ)
10. Սիրոյ ու տանջանքի յուշերից (ոտան Բ պրակ)

Բացւած է բաժանորդագրութիւն „ՈՏՆԱ-ՏԱԿ ՏԻԱՄ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ“ Պատմաւածքի բաժնեկիւնը՝ 20 կոպ.

Ցանկացողները ներկայ տարուս հոկտեմբերից սկսած թող գիմեն՝ Станция „Алагежь“ (Алэксандрон.-Эрванск, жел. дор.), Сибату Юзбану.